ժողովրդին, բայց օդի վնասակարութիւնը այնքան հակառակեց նրա ջանքերին եւ նպատակներին, որ երբ ես Մազանդարան գնացի արքունիքի հետ 40 տարի առաջ[1], քրիստոնեաների թիւն իջել էր 400 ընտանիքի առաջուայ 30.000ի տեղ, ինչպէս հաւատացնում էին ինձ: Գարհաբադի եպիսկոպոսն, որ մի բարի ծերունի հայ քահանայ էր, եւ լաւ ճանաչում էր երկիրը, ինձ ասում էր յաճախ, որ եթէ չլիներ երկրի արդասաւորութիւնը, որ քաշում է դէպ իրան շրջակայ ժողովրդներին, նա բոլորովին անապատ կը մնար, այնքան օդը վնասակար է: Մազանդարանի օդի վնասակարութիւնը այնքան յայտնի է, որ երբ թագաւորը որեւէ մի պաշտօնեայի նշանակում է այդ նահանգի պեհ, կամ Գիլանի՝ նրա ամենահարուստ մասի կառավարիչ, ժողովուրդը ասում է. "արդեօք սպանութիւն կամ գողութիւն է գործել, որ նրան ուղարկում են կառավարել Գիլանը:„ —

Արդեօք բոլոր 30.000 քրիստոնեայ ընտանիքը Հայեր էին, թէ՝ կային նաեւ Վրացիներ, Շարդէն չէ որոշում. հաւանական է, որ Վրացիներ եւս լինէին, բայց, մեծամասնութիւնը, անկասկած Հայեր էին: Ձենք կարծում, որ 30 տարուայ ընթացքում 30.000 ընտանիքը, ուրեմն մօտ 200.000 հոգի, վատ օդից եւ հիւանդութիւններից ոչնչացած լինեն եւ նրանց թիւը հասած լինի 400 ընտանիքի. անշուշտ, շատերը նորից վերադարձել են իրանց տեղերը կամ փոխադրուել այլ տեղեր: Բաց ի Շարդէնի վկայութիւնից կան եւ եպիսկոպոսական ու կա-

---

1 Ուրեմն հայերի փոխադրութիւնից մօտ 30 տարի յետոյ՝ 1632—33 ին: